



## 25. ՇԱՀՄԱՐԱՆ ԹԱՔԱՎՈՐԸ

Թաքավորանիստ մե քաղաքի մեջ աբրըմ էր մե աղքատ կնիկ: Էդ աղքատ կնիկը ուներ մե տղա՝ Սալի անունով: Սալու արեստն ի՞նչ էր. էթըմ էր բազար, հինգ կապեկ տալըմ ին, էթըմ էր աշխատում էր, էրկու կապեկ ին տալըմ, էլի էր էթըմ, մե կապեկ ին տալըմ, էլի աշխատում էր, չունքի նաշար էր, ճար չուներ:

Մե օր էլ Սալին գնաց բազարը, շատ կայնավ, արևն հելավ կեսօր, աշխատանքի տանող չըհելավ, սոված-ծարավ թողեց էկավ տուն: Հեքսի օրն էլ գնաց, էլի տանող չըհելավ, կայնավ, կայնավ, փոր-փոշման դարձավ էկավ տուն:

Որոշեց, ասավ. «Էթամ մեշից փետ բերեմ, ծախեմ, գոյնա հացի փող էլ ա կրհանեմ»: Գնաց մեշից թաց-չոր փետ-փմուր հավաքեց բերեց, ծախեց, մեքյա փող աշխատեց, հեքսի օրն էլ էլի բտենց, էնքան գնաց-էկավ, որ մեշկը յարա հելավ, ասավ. «Էլ չեմ կանա փետ կրեմ, յավաշ ինչ հելե-հելե, նորից էթամ բազար»:

Գնաց բազար, էդ օրն էլ էդ մարթին տանող չըհելավ, հիրիկունն արևկը մուտեմուտ, փորը-փոշման թողեց էկավ տուն:

Էն հեքսի հառավոտն էլի գնաց բազար, սպասեց, սպասեց, էլի մարթ-մուրթ չերեաց, մեկ էլ վարավուրդ արավ, որ հեսա էրկու հոքի ձեռքերը խաչած կայնած են:

Սալին էկավ ըտանց կուշտը, հարցրեց.—Ի՞նչ մարթ եք:

Հստանք՝ թե.—Քյասիր տղեք ենք, էկեր ենք, որ աշխատանք ճարենք, ոչ մե կապեկ փող ունենք, ոչ էլ քնելու տեղ:

Սալին ասավ.—Ես էլ ձեզ պեստ մե քյասիր, աղքատ տղա եմ, մե պառավ մեր ունեմ, էկեք էս քշեր էթանք մեր տունը:

Սալին տղեքին տարավ հիրանց տունը, քնան, հեքսի օրը էլի հիրար հետ գացին բազար, կայնան, կայնան, էլի տանող չըհելավ:

Սալին ասավ.—Տղե՛ք, էկեք էթանք մե-մե ճոպան վերցենք, էթանք մեշից ցախ բերենք, ծախենք, աբրենք:

Տղեքն ուրախացան, ասին.—Սալի՛, դու մեր մենձ ախպերն ես, ըստուց դեն ինչ որ ասես՝ կըսենք:

Գացին մեշեն, ցախ բերին, ծախին-ծախծին, քիչ-միչ փող

աշխատին: Մե օր էլ Սալին ասավ, թե. «Տղե՛ք, ըսենց չի հընի, մենք մեռանք շկով ցախ կրելով, մեշկներս յարա հեղավ»:

Տղեքն ասին.—Բա ի՞նչ անենք:

Սալին ասավ.—Էկեք մարթ ա մե էշ առնենք, էշերով կրենք:

Գացին մարթ ա մե էշ առան:

Էշերը վերցած գացին մեշեն, ցախ բարցին, բերին ծախին: Հեք-սի օրը էլի գացին:

Սալին ասավ.—Էկեք մտնենք մեշի խոր տեղը, լավ ցախ տա-նենք, որ բանցը գին տան:

Գացին, էշերը բարցան, հետ գալու վախտը Սալու էշը կորավ:

Տղեքն ասին.—Ոչի՞նչ դու գնա մա՞ն արի, քթի՛, մենք յավաշ-յավաշ կեթանք, կրգաս, կըհասնես:

Սալին ասավ՝ լա՛վ:

Տղեքը էշերը քշին էկան, Սալին գնաց դե՛ս ման էկավ, դե՛ն ման էկավ, վերջը տեհավ՝ հեսա էշը արածացե, կշտացե, հիրան համար պառկեր ա:

Սալին հիրան-հիրան հոսոտավ, ասավ.—Այ ես քո տիրու հերն անիծեմ, հընգերներս գացին, ես քո հերեսից մացիմ:

Ասավ, ծառից մե ճուղ կդրեց, տուր որ կըտաս, ծեծեց էս խեղճ էշին: Հեռար որ հիշավ, փետերը բարցեց, քշեց: Մե ծառի տակով հընցնելու վախտը էշի ետի ոտների տեղը փոսը հընգավ:

Սալին ասավ. «Ըստե մե բան կա»: Փետի ծերով խողը դես-դեն արեց, փետի ծերը դբավ մե սալի, սալը բարցրցրեց, ի՞նչ տենսա՝ տակը լիքը մեղր: Սալին սալը նորից դրեց խորի բերանը՝ ծաս-կեց, կողքին մե նշան արավ, որ տեղը չըկորցնի, ուրախ-ուրախ էշը քշեց, էկավ հասավ տղեքին:

Տղեքը հարցրին.—Սալի՛, խեր հընի, էղ ը՞նչես էդքան ուրախ:

Սալին ասավ.—Ընչի ուրախ չըհընեմ, հաջողություններս բաց-վեր ա՝ մեղրի խոր եմ քթե, հըմի պտի մե ընենց հարուստ մարթ ճարենք, որ էղ խորի հըմեն մեղրը ծախենք ընդան:

Հառավոտը հելան գացին, մե հարուստ մարթի քթան, ասին.—Խալիֆա՛, մեղր ունենք ծախելու, կառնե՞ս:

Էս մարթը՝ թե.—Մեղրի պեստ արրանք հընի, ընչի՞ չեմ առնի:

Խալիֆեն ինչ-որ աման-չաման ուներ, տվեց ստանցը:

Տղեքը ամաններն առան գացին: Սալին տարավ կայնըցրեց խո-րի վրեն:

—Հեսա, —ասավ, —սալը շո՛ւու տվեք:

Սալը շուռ տվին, տեհան՝ տակը լիքը մեղր ա:

Մեղրը լցին ամանները, սկսին կրել: Քսանհինդ օր կրեցին, վեր-դի օրը՝ էշերը բառնալու վախտը, Սալու էշի խուրչնի մե թայը դար-

տակ մնաց: Ի՞նչ անենք, ի՞նչ չանենք. որոշին, որ մեկը մտնի խորը, պատերը քերի, մեղրը հանեն, բեռը դզեն: Վո՞վ մտնի, վո՞վ չըմտնի:

Տղեքը խոսքները մեկ արին, ասին.—Սալի՛, էս խորը դու ես քթե, համ էլ քո էշի բեռն ա կիսատ մնացե, դու պտի մտնես:

Ճոպանը կապին Սալու մշկին, հիշցրին խորը:

Սալին հիշավ խորը, փետի ծերով խորի տակը քերեց, լցեց վեղ-րոքը, տվեց տղեքին, տղեքը քաշին:

Սալին ասավ.—Տղե՛ք, էլ չըկա, պրծավ, ճոպանը քաշե՛ք, դուս գամ:

Տղեքը մեքյա քաշին, կայնան, հանին դանակով ճոպանը կղրին, Սալուն քցին խորի մեչը: Սալը դրին խորի բերանը, էշերի գլուխը թեքին դբա հարուստի տունը:

Էկան ասին.—Խալիֆա՛, եղածն էս ա, էլ մեղր չըկա, մեր փողե-րը տո՛ւ:

Հարուստը, որ տեհավ հընգերներից մեկը չըկա, հարցրեց.—Բա ձեր մե հընգերն հո՞ւր ա:

Ասին.—Էնի մեր հընգերը չէր, մեր մենձ ախակերն էր, հիվան-դացավ, մնաց տանը:

Փողը հաշվին՝ բռնեց իրեք հարիր հազար մանեթ: Էրկու հըն-գերներով փողը կիսին, տարան Սալու էշն էլ ծախին, ըսկի մե կա-պեկ փող էլ չըտվին խեղճ Սալու մորը: Փողերն առան էկան քա-ղաքի մեջը, ամենքը մի խանութ բացին, սկսին հիրանց համար առըտուր անել:

Թոստանք ստե առըտուր անեն, մենք սալըխը տանք Սալուց: Սա-լին մնաց խորի մեջը՝ տխուր-տրտում, լալով-մղկտալով: «Անիմի՛ղճ-անաստվածներ, ես ձեզ ի՞նչ իմ արա, որ ընձի թողիք խորի մեջ»:

Խեղճը անոթի էր, փետի ծերով խորի կողերից քանդըմ, մեղր էր հավաքըմ, ուտըմ: Հեքսի օրը Սալին խորի կողը պշպորըմ էր, մեկ էլ մե հատ մկան ծակ քթավ, փորեց, ծակը լենցրեց, գնաց դուս էկավ էն մյուս յանը:

Մե հատ լուս էրևաց, էս լուսի վրա տեհավ հեսա մե հատ օց՝ կտուտված նստած, զլսին մե հատ էլ անգին քար լուս էր տալըմ:

Սալին, որ էս օցին տեհավ, թուքը-մուքը չորացավ:

Օցը զլոխը բանցրցրեց, լեզու առավ, ասավ.—Անիրավ, ան-խիղճ Սալի՛, ես քեզ ի՞նչ իմ արե, որ հնգերներիդ բերիր իմ պա-շար մեղրը տարար: Հէսօրան օրը ես թաքավոր մարթ եմ, անոթի նստած, չեմ իմանում ինչ ուտեմ:

Սալին ասեց.—Ի՞նչ թաքավոր:

—Ես, —ասեց, —սադ աշխարհքի օցերի թաքավորն եմ՝ Շահմարան թաքավորը, բա դու իմ անունը ըսկի չե՞ս լսե՞:

Սալին վախտից չորացե, մե ճանգ էր դարցե:

—Շատ լավ արին քո ընգերները, որ քեզի թողին խորի մեջ: Քեզ վով էր ասրմ էթաս բոլոլա անես, թե մեղր ես քթե: Քթեր իր, քթե, կրգիր, իշքան քեզ պետք ա, կրտանիր, էն վախտը հա'մ դու կաբրիր, հա'մ ես: Հըմի ընդանք հարստացան, վաճառական դարցան, իսկ դու ըստե խորի մեջ փտըմ ես:

Սալին հընգավ Շահմարան թաքավորի ոտը, ասավ. —Շահմարան թաքավոր, ես արեր եմ, դու մի՛ արա, վերև՝ Աստված, ներքև՝ դու, արի դու ընձի էս խորի մջից հա՛ն, ազադի՛:

Օյն ասավ. —Հա՛, ազադեմ, որ էթաս էս անքամ էլ մատնես, գան գլոխս կղրեն: Գնա՛, —ասավ, —քեզ ազադում չըկա, գնա տեղդ հանգի՛ստ նստի:

Սալին գնաց ձեռքերը ծալեց, կղկվավ, նստավ:

Մե տարին թմմավ, նորից Սալին չոքեչոք էկավ խնդրեց, ասավ. —Ամա՞ն, Շահմարա՞ն թաքավոր, քո բախտն եմ հընգե, ազադի՛ ընձի էս տանջանքից:

Թաքավորն ասավ. —Սալի՛, հըլը վախտը չի, կանաս մե առա՛կ ասա անգաջ անենք:

Սալին ասավ. —Թաքավոր, ես առակ չեմ հիմանըմ:

Օյն ասավ. —Էն վախտ ես կասեմ:

Ասավ՝ ասա՛:

Շահմարան թաքավորն ասավ. «Սալի՛, մե քաղաքի մեջ արրըմ էր մե հարուստ ջնուդ, էդ ջնուդը ուներ մե հատ շատ սիրուն ախչիկ, Դունյա Գյոզալ էր անունը: Ջնուդը առըտուրական էր. արրանք էր առնըմ-ծախըմ:

Մե օր ջնուդը հեռու երգներից գալըմ էր, մե բանցը բաշի տակով հընցնելու վախտը մե հատ անգին քար քթավ, վերցեց թամաշ արավ, ասավ. —Կա՛չըկա, էս քարը էն բանցը տեղից ա հընգե, կարող ա ընդեղ էլի հըլնի:

Ջնուդը էրկու ոտ ուներ, էրկուսն էլ փոխ առավ, թուավ էկավ տուն, գործ-մործը վերջացրեց, գնաց կայնավ քաղաքի մեջտեղը, ասավ.

—Ժողովո՛ւրթ, ձեզանից վով որ գա իմ խնդրանքը կատարի, իմ Դունյա Գյոզալ ախչիկը կըտամ ընդան:

Էն յանից մե ջահել տղա էկավ ասավ. —Ես կրգամ:

Ջնուդը վերցեց տղին բերեց տուն, տարավ հիրա Դունյա Գյոզալ ախչկան նշանց տվեց: Հեքսի օրը 12 լավ ձի վերցեց, մե հատ էլ առըդ ձի, քչին գացին, հասան բաշի տակը:

Որ հասան բաշի տակը, ջհուղը տղին ասավ.—Զան, ձիանդ սատկցրա՛:

Տղեն զանեց ձիանը, սատկցրեց:

Ասավ.—Փորը մաքրի՛:

Տղեն ձիան փորը մաքրեց, ջհուղը տղին կոխեց ձիան փորը, թել ու մախաթով բերանը կարեց: Տղեն սկսեց լաց հընել, ջհուղն ասավ.—Մի՛ լա, հըմի քո փրգիչը կրգա:

Ասավ ու հինքը քաշվավ հեռու կայնավ: Մեկ էլ էն յանից Զմրուխտ կուշն էկավ, ջանդակը վերցեց հանեց բաշի գլոխը, դնդկեց, որ ուտի, տղեն մջից դուս էկավ:

Ջհուղը բաշի տակից ձեն տվեց, ասավ.—Տղա՛, ձիան փորից դուս էկար:

Տղեն ասավ.—Հա՛, խազե՛ին, դուս էկամ:

—Հը, բաշի գլխին ի՞նչ կա:

Տղեն ասավ.—Խազե՛ին, ինչ ասես որ չըկա՛ էլ անգին քար, էլ ջափահիր:

—Դե, —ասեց, —թափի՛, թո գա:

Տղեն սկսեց թափել: Ջհուղը 12 ձիան բեռը բռնելուց հետո ձիանքի գլուխը թեքեց դբա տուն:

Տղեն բաշի գլխից բռոաց.—Խազային, խազային, բա ըխա ես մնացիմ ըստեղ:

Ջհուղն ասավ.—Ի՞նչ անեմ, որ մնացիր:

Տղեն մնաց բաշի գլխին, գելի, գազանի փայ դարցավ»:

—Սալի՛, —ասավ օցը, —ոնց որ էն տղեն ընդե մահացավ, ընենց էլ դու պտի ըստե մեռնես:

Սալին աջղավ, քաշվավ գնաց մե քնջի, կուճորվավ նստավ:

Էկավ երգրորդ տարին թմավ, Սալին էլի չոքեչոք էկավ հընդավ օձի ոտերը, մունաթ արավ, ասավ.—Շահմարան թաքավոր, խնմրում եմ, աղաչըմ եմ, ազագի՛, էթամ հասնեմ իմ խեղճ մորը:

—Է, —ասաց Շահմարան թաքավոր, —Սալի՛, բա չես ասում, թե էն ջհուղի վերջը ի՞նչ հելավ:

—Ի՞նչ ասեմ, թաքավո՛ր, ես ի՞նչ գիտեմ՝ ինչ հելավ:

—Ջհուղը, Սալի՛, էլ չըմնաց ըտե, գնաց մե ուրիշ քաղաքք: Էլի մե ջահել տղա քթավ, տարավ բաշի տակը, էս անգամ 48 ձի տարավ, որ շատ բեռ բերի: Էլի էս տղին հրամայեց ասավ՝ զան առըդ ձիանը սատկցրա՛: Տղեն շատ կվաթով էր, մե հատ որ զանեց, ձին պալածորավ: Ասեց՝ ձիան փորը մաքրի՛, տղեն մաքրեց: Ջհուղը վերցեց տղին կոխեց ձիան փորի մեջը, բերանը կարեց, էլի Զմրուխտ կուշն էկավ, ջանդակը վերցրեց, հելավ բաշի գլոխը:

Ջհուղը տակից հարցրեց.—Հը, տղա՛, ի՞նչ կա ըտե:

**Տղեն ասեց.**—**Ինչ ասես կա՛ անգին քար, զմրուխտ, բրլիանդ:**  
**Ասավ.**—**Դե թափի՛, գա:**

**Տղեն թափեց, ջհուղը հավաքեց, լցեց խուրջինները, արավ 48**  
**ձիուն բեռ, ձիանքի գլուխը թեքեց դրա տուն:**

**Տղեն բաշի գլուխը բոռաց.**—**Խազեի՞ն, խազեի՞ն...**

**Խազեինն ասավ՝ ի՞նչ ա:**

**—Խազեի՞ն, բա ես մնամ ըստե՞օ:**

**—Մըրմ ես, մնա, ինձ ինչ:**

**Տղեն հիրան դես զանեց, դեն զանեց, մե իդ քթավ, էդ ըզով**  
**զնաց դուս էկավ մե ամահի մեշի մեջ: Էդ մեշի մեջ մե ջրի հավուզ**  
**կար:** Տղեն հավուզի կշտին մե քյոլգյալդ սարքեց, մտավ մեջը ու ըն-  
**դե անոթի-ծարավ աբրըմ էր: Սալի՛, ոնց որ էն տղեն էն անահուն**  
**մեշի մեջը մենակ աբրըմ էր, ընենց էլ դու մենակ կաբրես էս մութ**  
**խորի մեջը:**

**Էլի Սալին փորը-փոշման թողեց գնաց հիրա պուճախը:** Անցավ  
մե կլոր տարի, էլի Սալին էկավ օցի կուշտը, խնդիր արավ, աղա-  
չեց-պաղատեց:

**Օցն ասավ.**—**Սալի՛, բա դու ըսկի բան չես հիմանըմ, մե առակ**  
**էլ դո՛ւ պատմի, լսենք:**

**Սալին ասավ.**—**Ես ոչ մե բան էլ չեմ հիմանըմ:**

**—Դե որ չես հիմանըմ, լսի՛, ես պատմեմ:**

**Ասավ.** «**Սալի՛, մե քաղաքի մեջ մե մարթ էր աբրըմ, անունը**  
**Ձուվանշահ էր:** Էս մարթը էթըմ էր հուրիշ երգըներ առըտուր էր  
անըմ: Էդ երգըներից էդ մարթը ձեռ էր բերե մե հատ թառլան  
կուզ: Ձուվանշահը շատ էր սիրըմ հիրա էդ կշին: Ամբողջ կարողու-  
**թյունը մե յան, էդ կուչը՝ մե:** Կուչն էլ լեզու էր առե, մարթի նման  
խոսըմ էր: Մե անգամ Ձուվանշահը էլի գնաց հիրա առուտուրին,  
մե տարի ետացավ, իսկ Ձուվանշահի կնիկը հիրա կուշտը մարթիկ  
էր տանըմ-բերըմ:

**Թառլան կուշն ասավ.**—**Խանըմ, ըտենց բան մի՛ արա, խազե-  
ինը կրգա, կասեմ:**

**Կնիկը սայմիշ չարավ:** Կուչը մե էրկու անգամ էլ ասեց, որ ջա-  
նին հասցրեց, խանըմը վերցեց կշին տարավ կտուրը, ոտերը կա-  
պեց, վերեւ մե հատ փոս արավ, մե վեղրո ջուր լցեց, էդ ջուրը  
էնքան կաթաց կշի գլխին, մինչև կուչը սատկավ:

**Մնաց տարին թմմավ, Ձուվանշահը վերադարձավ:** Էկավ տուն,  
աբրանքը թողեց հայաթի մեջը, որ սվթա կշին տեներ, կուչը տանը  
չէր:

**Ասավ.**—**Ա՛յ կնիկ, հո՞ւր ա մեր թառլան կուչը:**

Կնիկն ասավ.—Զեմ հիմանըմ, էն օրը, որ դու տնից դուս էս էկե, կուշը քո հետևից գացեր ա, չըկա:

Զուվանչահը սկսեց կշին ման գալ, չըքթավ: Հեղավ կտուրը, տեհավ՝ հեսա կուշը սատկած, քցած ըստե: Իշկաց վիրե, տեհավ՝ կշի դիվերին մե հատ փոս ա շինած՝ ջուրը մջին: Ըստե Զուվանչահը հասկացավ, որ էդ փոսի մջից կաթացեր ա կշի գլխին, խեղճ հայ- վանը սատկեր ա:

Էկավ կնգան հանեց կտուրը:

Նշան տվեց, ասավ.—Կնիկ, տենըմ ես՝ հեսա վերկից ջուրը կաթացեր ա կշի վրեն, կուշն էլ սատկեր ա:

Կնիկը՝ թե.—Ես խաբար չեմ, հալբաթ անձրւ ա էկե, անձրւի ջուրն ա կաթացե:

Զուվանչահը էլի համբերավ, հարևաններին կանչեց, ասավ.—Հարևաններ, դուք հըլնեք ձեր հոր սաղաղեն, էս տարի անձրւ էկեր ա:

Հարևաններն ասին.—Զէ՛, չի էկե:

Զուվանչահը, որ տեհավ կնիկը խաբըմ ա, զլիսի հընգավ, որ ըստե մե բան կա:

Էկավ տուն, ասավ.—Այ կնիկ, դու գիղիր, որ իմ սաղ հարստու- թյունը մե յան, էդ կուշը՝ մե յան, ընչե՞ս սատկցը:

Կնիկը ձեն չըհանեց, Զուվանչահը հեռոստավ, վերցրեց մե էրկաթի կտոր, տվեց կնգա մեյիղը փոեց գետին:

—Վա՛, —ասավ,—էս ի՞նչ արիմ, հա՛մ կշից զրկվամ, հա՛մ կնգանից:

Զուվանչահը փոշմնավ հիրա արածից: Սալի՛, ոնց որ Զուվան- չահը փոշմընավ հիրա արածից, ընենց էլ դու ես փոշման քո արա- ծից, դե գնա սուսուփուս նստի՛ տեղդ»:

Սալին զլուսը կախ քաշվավ հիրա տեղը: Էլի մե տարի անցավ:

Սալին նորից էկավ օցի կուշտոր, խնդիրք արավ, ասավ.—Շահ- մարան թաքավոր, բոլ ա դու ընձի տանջես, ազաղի՛ էս տանջան- քից քո հոր սաղաղեն:

Շահմարան թաքավորն ասավ.—Լսի՛, Սալի՛, մե առակ էլ պատմեմ:

Ասավ. «Սալի՛, մե գեղի մեջ արրըմ էր մե ավչի: Էդ ավչին ու- ներ մե լավ շուն, մե հատ էլ թաղան կուչ: Թաղան կուշը դնըմ էր թւին, շունը քցըմ էր հետևից, էթըմ էր ավլկուշ էր անըմ: Մե օր ավչին ծարավ էր, շատ դեսուղեն ման էկավ, ջուր չըքթավ, էկավ ուստ էկավ մե քարափի: Տեհավ, որ էտ քարափի տակից կաթ- կաթ ջուր ա գալըմ:

**Սումկի մջից կրուչկեն հանեց, բռնեց էտ կաթկթան ջրի տակ:**  
**Կրուչկեն լցվավ: Ավչին վերցեց, որ խմի, շունը թաթով զանեց էդ կրուչկի ջուրը թափեց:**

**Ավչին ասավ.—Այ սատկած, ծարավ մեռնըմ իմ, ջուրը ընչի՞ թափիր:**

**Ավչին էլի կրուչկեն բռնեց ջրի տակը, լցվավ, ուզըմ էր խմի, շունը էլի թաթով զանեց, ջուրը թափեց: Ավչին մեկ էլ լցեց, որ խմի, շունը էլի թափեց: Ավչին հեռաստավ, թվանքը քաշեց, զանեց շանը սատկացրեց: Ավչին ծարավ էր, չէր դիմանըմ, կրուչկեն տարավ դրա ջուրը, ջուրը կաթ-կաթ լցվավ, ուզըմ էր խմի, էս անգամ էլ թառլան կուշը թևով զանեց ջուրը թափեց: Ավչին նորից կրուչկեն բռնեց ջրի տակ, լցվավ, վերցեց, որ խմի, էլի կուշը թևով զանեց կրուչկեն շուռ տվեց, ավչին մեկ էլ փորձեց, կուշը էլի ըլթողեց: Ավչու համբերությունն հատավ, թվանքը քաշեց, զանեց կշին էլ ընդը սատկցրեց:**

**Ավչին ասավ. «Ջանըմ, էս կաթկթոցից ես չեմ կշտանա, յավաշ հառեշանամ, էս ջրի ակը քթնեմ, մե կուշտ խմեմ»: Ավչին հելավ բաշի գլուխը, մեկ էլ ի՞նչ տենա՝ մե հատ ահոելի վիշապի քանի վախտվա սատկած էր: Դու մի ասա, էտ վիշապի թույնն էր գալըմ կաթ-կաթ թափը: Ավչին էկավ կայնավ հիրա շան ու թառլան կշի գլխին, փոշմնավ հիրա արածը, գլխին զանեց, չոքին զանեց, նոր էլ որդե:**

**—Սալի՛,—ասավ օցը, —ոնց որ էն ավչին փոշմընավ հիրա արածի վրեն, դու էլ պտի փոշմանես քո արածի վրեն, դե զնա տե՛ղդ նստի, քեզ ազադում չըկա:**

**Մնաց, տարին որ թմմավ, էլի Սալին զնաց օցի կուշտը, էլի աղաշանք-պաղատանք արավ, որ ազադի:**

**Շահմարան թաքավորն ասավ.—Սալի՛, բա դու ըսկի ոչ մե բան չե՞ս հիմանըմ՝ առակից, նաղից:**

**Սալին ասավ՝ չէ՛:**

**—Դե լավ, չէ՛, չէ՛, լսի՛, մե պատմություն էլ ունեմ:**

**—Սալի՛,—ասավ,—մե զեղի մեջ մարթ ու կնիկ են հըլնըմ, ունենում են վեցը տղա:**

**Օրերից մե օր էդ մարթի կնիկը մահանըմ ա, մարթն էլ մեծանըմ, հըլնըմ ա իննառւն տարեկան: Դու բե, որ ըտա տղեքը սաղ էլ բեղովլաթ են հըլնըմ, ոչ մեկն էլ տեր չի կայնըմ հիրանց հորը: Հերը հընգնըմ դռնեղուռ, հաց ա հավաքըմ: Մե օր ըստե, մե օր ընդը, վերջը չոլերն ա հընգնըմ, հիրան տալըմ ա բանջարի, սովամահ հըլնըմ, մեռնըմ:**

Ոնց որ էդ մարթը անտեր մնաց, մեռավ, Սալի՛, ընենց էլ նակա-  
ֆիլ մե օր դու կը հնգնես կը մեռնես:

Սալին ըստե մե ծանդր ախ քաշեց, ասավ. «Ճա՞նթմ, ես հույս եմ  
դրե, որ ազադվեմ, էսի առակ պատմելով՝ ընձի կըսպանի»:

Նորից էկավ տարին թրմմավ, Սալին էլի չոքեչոք էկավ օցի  
կուշտն ասավ.—Քո որդու սաղաղեն, կամ ընձի հան լուս աշխարհ,  
կամ մե անգամից վերջս տու:

—Սալի՛,—ասավ օցը,—բա չես ասըմ էն տղեն, որ հավուզի  
կշտին հիրան համար քյոլգյալդ էր սարքե աբրըմ էր, ընդա ախրը  
ի՞նչ հելավ:

Սալին ասավ.—Ես ինչ հիմանամ, թաքավո՛ր, ի՞նչ հելավ:

Ասավ.—Դե լսի՛, ես ասեմ:

—Օրերից մե օր, Սալի՛, իրեք հատ հուրի-փերի էկան, հիշան էդ  
հավուզի կրաղը, թեփուրները հանին, մտան հավուզի մեջ, լողա-  
նըմ ին:

Տղեն գոխտուկ մոտեցավ ընդանցից մեկի թեփուրները գողա-  
ցավ, տարավ, հիրա քյոլգյալդի մեջ պաշեց:

Լողացան պրծան, էկան, որ թեփուրները հաքնեն, էրկուսն հա-  
քան, էն մեկը տեհավ, որ հիրա թեփուրները չըկա, ասավ.—Ինս  
ես, ջինս ես, ես քոն եմ, դու իմն ես, դո՛ւս արի:

Տղեն գուս էկավ, թեփուրները տվեց ախչկան տարավ հիրա  
քյոլգյալդը, իրեք օր հիրաը հետ էդ քյոլգյալդի մեջ աբրան ոնց որ  
մարթ ու կնիկ:

Ախչիկն ասավ.—Այ մարթ, էլ մենք չենք կանա ըստե աբրի,  
արի էս ծովերն ու ցամաքներն հընցնենք, էթանք մե քաղաքի մեջ  
մարթավարի աբրենք:

Տղեն ասավ՝ լա՛վ:

Հուրի-փերի ախչիկը տղին առավ շալակը, թուան գացին մե քա-  
ղաքի կրաղ, հիջան:

Ախչիկն ասավ.—Ես ըստե կայնեմ, դու գնա քաղաքի մեջ մե  
տո՛ւն քրեի, էթանք աբրենք:

Տղեն ախչկան թողեց ըտե, գնաց: Տղեն որ գնաց, հուրի-փերի  
ախչիկը թմավոր էր, թուավ գնաց:

Տղեն դարձավ էկավ, տեհավ՝ կնիկը չըկա, գլխին տվեց, փոր ու  
փոշման ետ դարձավ տիսուր-տրտում, անտեր-անտիրական գնաց  
քաղաքը:

—Սալի՛, ոնց որ էն տղեն փոր ու փոշման մնաց, ընենց էլ դու  
կըմնաս, դե գնա տե՛ղդ նստի:

Մե տարի էլ թմմավ:

**Սալին նորից էկավ հընգավ Շահմարան թաքավորի ոտերն, ասավ.—Աման, Շահմարան թաքավոր, կամ ընձի խայթի-սպանի, կամ էլ ազադի էս մութը դժոխքից:**

«Սալի՛—ասավ,—րա չես ասըմ, որ էն տղեն դարձավ զնաց քաղաքը, ընդա ախըրը ի՞նչ հելավ: Սալի՛, տղեն քաղաքի մեջը ման էր գալըմ, մեկ էլ տեհավ ըհը, էն ջհուղը, տեղափոխվե էկեր ա էս քաղաքը: Տղեն ջհուղին ճանանչավ, ջհուղը տղին՝ չըճանանչավ:

**Տղեն տեհավ, որ հեսա ջհուղը էլի սովորականի պեստ էկավ դիմեց ժողովրթին ասավ.—Զեղանից վով որ գա, իմ ասածն անի, համ Դունյա Գյողալ ախչկան, համ էլ իմ հարստության կեսը կը-տամ ընդան:**

**Տղեն ասավ.—Խազե՛ին, ես կըգամ:**

Ջհուղը տղին վերցեց, ուրախ-ուրախ տարավ տան դուռը բացեց, ասավ.—Տենըմ ես, էս իմ Դունյա Գյողալ ախչիկն ա, եթե ասածներս անես, էս ախչիկը քոնն ա:

**Տղեն ըսկի ախչկան չիշկաց էլ, ասավ.—Խազե՛ին, չուտ արա, գործ ունենք:**

Ջհուղը թամբեհեց, որ 48 ձիան տեղ հարիր ութանասուն ձի պաղրաստեն: գացին քնան: Հեքսի հառավոտ պտի ջհուղը տղի զարթնցեր:

**Տղեն քնից հելավ, գնաց խազեկինի կուշտն ասավ.—Խազե՛ին, խազե՛ին, լուս ա, վե՛ր կաց էթանք մեր գործին:**

Ջհուղը վեր կացավ, ձիանքը պատրաստին, մե հատ էլ առը ձի վերցին հընդան ճամփա:

Որ հասան բաշի տակը, տղեն, առանց մե ջհուղի ասելու, զանեց ձիանը սատկցրեց, փորը մաքրեց, մտավ ձիան փորի մեջ, ջհուղին ասավ՝ կարի՛:

Ջհուղը մաթալ մնաց, ասավ.—Էս ինչ զալում տղա յա:

Ջհուղը ձիան փորը կարեց, էն յանից Զմրուխտ կուշն էկավ, ջանդակը վերցեց, հանեց բաշի զոխը: Ջանդակը ցրեց, որ ուտի, տղեն ձիան փորի մջից դուս էկավ, կայնավ ընդե:

Ջհուղը ցածից ձեն տվեց, ասավ.—Հը՞, տղա՛, ըտեղ ի՞նչ կա:

**Տղեն ասավ.—Ինչ ասես որ չըկա՛ լալ ու ջավահիր, անգին քար, բրլիխան:**

Ջհուղն ասավ.—Դե թափի՛, գա, որ բեռները բառնանք:

**Տղեն ասավ.—Խազեին, բա որ թափեմ պրծնեմ, ես ո՞նց պտի չիջնեմ զամ:**

Ջհուղն ասավ.—Ես ճամփեն նշանց կըտամ:

—Տո շա՞ն տղի ջհուղ, ըխա ես բստե մեկ էլ եմ հելե, դու ընձի խափեր ես, չիմի էլ ես ուղըմ խափե՞ս:

**Ասավ.**—Որ քոռնաս էլ, մե հատ էլ չեմ քցի. Էն վաղ էր, որ էշը կաղ էր:

Ճհուղը, որ տեհավ ինչը ընչից ա, սասր-մասը կտրեց, փորը փոշման զարձավ էկավ տուն, տուն հասնելու բաշտան նախանձությունից սիրտը պաղուավ, մեռավ:

Իսկ տղեն էլի նույն իգը բոնած գնաց էն նույն մեշի մջով հասավ Հավուզին, ման էկավ, ման էկավ, հիրա քյոլզյաղն էլ քթավ:

Մտավ քյոլզյաղի մեջ, մեջյա մնաց, դուս էկավ, որ դուս էկավ, տեհավ՝ հեսա էլի հուրի-փերիքը էկան, որ լողանան: Էրկուսը մտան լողացան, իսկ էն մե քվորը չըթողին:

Ըստանք որ լողացան պրծան, էս անքամ էլ պստի քուրը մենակ էկավ, թեփուրները հանեց մտավ Հավուզի մեջ: Տղեն գողտուկ հելավ, ախչկա թեփուրները գողացավ, մտավ քյոլզյաղի մեջ:

**Ախչիկը** մնաց տկլոր կայնած, ասավ.—Ինս ես, ջինս ես, թեփուրնե՞րս տուր, ես քոնն եմ, դու իմն ես:

Տղեն ասավ.—Զէ՛, չեմ տա: ՄԵԼ խափնվեր եմ, էլ չեմ խափնվի:

Ախչիկը երդում կերավ, ասավ.—Հացը-զինին, տեր կենդանին, դու իմն ես, ես քոնն եմ:

Տղեն ախչկա թեփուրները տվեց, ձեռից բոնեց, որ էլ չըփախնի, հիրար հետ գացին, որ մե հարմար քաղաք քթնեն աբրեն: Գացին էլի էն նույն քաղաքը, մե լավ տուն քրեին, աբրան:

—Սալի՛, —ասավ Շահմարան թաքավորը, —հիմի ես քեզ էս խորից կըհանեմ, հրմա իմ մեղքը քո վիզը, ընձի չըմատնես:

Ասավ՝ չեմ մատնի:

Շահմարան թաքավորն ասավ.—Հում կաթնակեր ես, քեզի էյթիբար չըկա, կրմատնես:

Սալին երթում կերավ, ասավ մինչև զլոխս շեմին չըդնեն, կդրեն, չեմ մատնի:

Օյը Փշաց, որ Փշաց, 12 հատ նխշուն օց էկան կայնան, ասավ.—Էս մարթին սաղ-սալամաթ խորից դուս կըհանեք:

—Սալի՛, —ասավ Շահմարան թաքավորը, —որ դուս կըհըլնես, մտահան չանես, սալը պինդ կըդնես խորի բերանը, նոր կէթաս:

Սալին դուս էկավ, սալը ուսուլով դրեց խորի բերանը, գնաց:

Շատ գնաց, թե քիչ, շատ ու քիչն էլ հինքը գիղի, հասավ հիրանց երգիրը: Ման գալով գնաց քթավ հիրանց տունը, դուռը ծեծեց: Մերը ներսին էր, ափլը գիղի էկավ դուռը բացեց: Սալին ներս մտավ: Մերը տղին չըճանանչավ:

Սալին ասավ.—Նանի՛, ես քո տղեն եմ, Սալին եմ:

Մերը չըհավատաց:

Սալին հարցրեց, ասավ.—Նանի՛, էն իմ հընդերները ի՞՞նչ հելան:

—Ռար հընգերները:

—Են, որ հիրար հետ ցախինք կրըմ, միտդ ա՞:

—Ընչի՞ միտս չի: Ընդանք հըմի մեր քաղաքի ամենահարուստ մարթիկն են:

Սալին ասավ.—Նանի', բա իմ էշը ի՞նչ հելավ, չըտվի՞ն քեզի:

Ասավ.—Զէ', բալա' ջան, ինչ էշ, ինչ բան, ես ոչ մե բանից էլ խաբար չեմ: Էս ա օխտը տարի ա, որ ես էս չորս պատի մեջին եմ, ո՛չ դուս եմ անըմ, ո՛չ նես, հարևաններն հաց են տալըմ, ուտըմ եմ, աբրըմ եմ:

Մեր ու տղա քնան: Հառավոտը, լուսը բացվի ձեր վրեն, լուսը բացվավ Սալու ու հիրա մոր վրեն:

Սալին դուս էկավ քաղաք, հարցուփորձով էկավ կայնավ էն խանութների առաջ, որտեղ հիրա հընգերներն ին աշխատում:

Կայնավ, կայնավ, տեհավ, որ հիրա հընգերները ըսկի հիրան յանը չեն իշկըմ, ասավ.—Այ անխիղճ-անաստված հընգերներ, ըսկի հերեսիս էլ չեք իշկըմ հա՞... ինչ արիք, իմ գլխին ինչ օյին ասես խաղացիք, էշ էլ ծախիք կերաք, բա իմ էշի գնից իմ մորը մե կապեկ էլ չըտվի՞ք:

Հընգերները նեղացան, ծառաներին ասին.—Դուս հանեք ըտան, մե քանի կապեկ փո՞ղ տվեք, թո փասափուսեն քաշի էժա:

Սալին ասավ.—Նամա՛րթ հընգերներ, ես որ մեռնեմ էլ, ձեր կապեկն ընձի պետքը չի:

Թքեց ընդանց խանութի շեման վրեն, գնաց:

Հեքսի օրը Սալին էլի գնաց բազար, հինգ-տաս կապեկ փող աշխատեց, հաց առավ, բերեց տուն, մոր հետ ուտըմ ին, աբրըմ ին:

Էղ քաղաքը թաքավորի վրեն ցավ թափավ. Էղ մարդը գոռոտավ: Իշքան դոխտուր, հերիմ կար, կանչին բերին, ճար-իլլաջ չելավ:

Իսկ Զիլիֆիլ քաղաքից էկավ մե հատ դոխտուր, իրեք օր քննեց թաքավորին, ասավ.—Որ ըստան հուրիշ դեղ չի օգնի, բացի Շահ-մարան թաքավոր օցից սավայի, որ բերեք մորթեք, ընդա մաի ջուրը քսեք, յարեքը կըլավնան:

Էհ, վո՞վ գիղի Շահ-մարան օցի տեղը, վով չըգիղի. մարթի մեկն ասավ.—Թաքավո՞րն աբրած կենա, մեր քաղաքի կրաղին աբրըմ ա մե հատ պառավ կնիկ, ընդա տղա Սալին օխտը տարի կորած էր, վայթե էնի հիմանա էղ օցի տեղը:

Մարթ հորկին պառավի տունը, Սալուն կանչին բերին: Սալին էկավ թաքավորի կուշտը, թաքավորը հիվանդ պառկած էր, դոխտուրն էլ նստած էր ընդա կողին:

Դոխտուրն հարցեց, ասավ.—Անունդ ի՞նչ ա:

**Ասավ՝ Սալի յա:**

—Սալի՛, —ասավ, —ես լսեր եմ, որ դու օխտը տարի կորած իր, Հո՞ւր իր գացը:

Սալին ասավ. —Դոխտո՛ւր ջան, քյամիր մարթ եմ, գացեր իմ աշխատանքի:

Ասավ. —Դու Շահմարան թաքավոր օցի տեղը գիղե՞ս:

—Զէ՛, —ասավ, —դոխտո՛ւր ջան, ես ի՞նչ հիմանամ:

—Սալի՛, —ասավ դոխտուրը, —ես իշկը եմ քո հերեսին, տենըմ եմ, որ դու գեղնի տակի աբրած ես, դե որ գեղնի տակի աբրած ես, օցի տեղն էլ գիմանաս:

Սալին ասավ. —Վալլա՛-բիլլա՛, դոխտո՛ւր ջան, չեմ հիմանըմ:

Դոխտուրը հրամայեց, ասավ. —Մե սրա շորերը հանե՛ք:

Շորերը հանին, տպլորցրին, տեհան՝ օխտը տեղ ջանի վրեն խալեր կա, դոխտուրը հսոստավ, ասավ. —Բա դու ասըմ իր՝ տեղը չեմ հիմանըմ, հետ ա՝ օխտը տեղ քո վրեն խալ կա: Բա ամոթ չի, ձեր երգի թաքավորը մահանըմ ա, իսկ դու, փոխարեն օգնելու, խափըմ ես մեզի:

Սալին էլի երթում կերավ, ասավ. —Վալլա՛-բիլլա՛, չեմ հիմանըմ:

Դոխտուրն ասավ. —Վերցե՛ք, —ասավ, —էս սրիկային տարե՛ք շեման վրա, վիզը կղրեք:

Ջանաթներն էկան Սալու թևերն օլրին, տարան գլուխը դրին շեման վրա, որ կտրեն, Սալին ասավ. —Ամա՞ն, մի՛ կղրեք, թողեք, ասեմ:

Դոխտուրն ասավ. —Դե, ասա՛:

Սալին շորերն հագավ, ասավ. —Քառասուն կուվաթով մարթ եմ ուզըմ, մե հատ մենձ յաշիկ, բահ, քլունգ, մե հատ էլ հերգեն ճոպան:

Վաղերները ալբալը բերին Սալու ուզածը, տվին հիրանը, Սալին վեկալեց էղ քառասուն ջանը, ճամփա հընգավ:

Գացին հասան խորի բերանը, Սալին ասավ. —Էս սալը բարցր-ցըրե՛ք:

Սալը բասցըին:

Զեռով նշան տվեց, ասավ. —Ըսե՞նց քանդեք:

Սկսեցին քանդել:

Քանդելով գացին հասան Շահմարան թաքավորի կուշտը: Սալին ձեռները դրեց դոչին կայնավ օցի առաջ:

Շահմարան թաքավորն ասավ. —Անիրա՛վ-անխիղճ, վերջը քո ասածն արիր:

Սալին ասավ. —Հա՛, թաքավո՛ր, էնքան չասիմ, մինչև գլուխը դրին շեման վրա:

—Դե լա՛վ, —ասավ Շահմարան թաքավորը, —Հելածն հելած ա:

—Սալի՛, —ասավ, —ի՞նչ ես բերե հետդ:

**Ասավ.** — Թաքավո՞ր, մե յաշիկ, մե հատ էլ ճոպան:

— Դե՛, — ասավ, — ընձի վերցա դի՛ յաշկի մեջը, բերանը փակի՛, դրե՛ք չիւակներդ, փոխեփոխ տարե՛ք:

Սվիթա Սալին շկեց: Մե խելի վախտ էթալուց հետո օքը յաշկի մջից ձեն տվեց:

Սալին ասավ. — Ասա՛, թաքավո՞ր:

Ասավ. — Էլ ինչ թաքավոր, սևն էկեր առ գլխիս, դու հըլը ասըմ ես՝ թաքավոր:

Ասավ. — Կշտիդ մարթիկ կա՞ն:

Ասավ. — Զէ՛, հեռու են:

— Սալի՛, — ասեց, — որ տեղ կըհասնեք, ընձնից չըհեռանաս, գլոխս էլ որ կդրելու հըլնեք, հուրիշի չըթողես, հա՛... Դոխտուրն իշքան կասի՛ տու ես կզեեմ, սայմիշ չանես, դու քո ձեռքով կըկզրես: Դոխտուրը քեզի իրեք հատ կանթերով կազան կըտա: Մե պատի տակ օջախ կանես, զլոխս կըկզրես, ընձի թիքա-թիքա կանես, կըլցես, կազաները, կըդնես կրակին, լավ կեռացնես: Ընդուց հետո Դոխտուրը քեզի իրեք հատ բութուզքա կըտա, կասի՛ հառաջի պղնձի քյաֆը լի՛ց առաջինի մեջ, երգրորդինը՝ երգրորդի, երրորդինը՝ երրորդի: Բայց դու հակառակը կանես՝ հառաջինի քյաֆը կըլցես երգրորդի մեջը, երգրորդինը՝ երրորդի, իսկ երրորդի քյաֆը կըլցես առաջի բութուզքի մեջ: Երգրորդ բութուզքից դու մե ստաքան կըխմես, մե ստաքան էլ կըպահես, որ տանես քսես մորդ աշկերին: Առաջի բութուզքեն կըխմցնես դոխտուրին, երրորդ բութուզքեն կըտաս, որ քսեն թաքավորի ջանին:

Ոնց որ օցն ասավ, Սալին ընենց էլ արավ: Տարավ սվիթա առաջի բութուզքեն տվեց դոխտուրին, ասավ՝ խմի՛: Երկրորդ բութուզքից մե ստաքան հինքը խմավ, մնացածն էլ տարավ քսեց հիրա մոր աշկերին: Երրորդ բութուզքին քսել տվեց թաքավորի ջանին:

Մե քանի սհամթ չանցաց՝ դոխտուրը մեռավ, իրեք օր հետո էլ թաքավորը մեռավ:

Սալին առողջացավ, դարձավ մե հատ հիմաստուն, ջահել լավ տղա, մոր էլ աշկերը լավացավ:

Թաքավորը որ մեռավ, Դովլաթ կուշը բաց թողին: Դովլաթ կուշին Փոռաց էկավ կայնավ Սալու գլխին: Մեկ էլ բաց թողին, մեկ էլ կայնավ, իրեք անգամն էլ կուշը Փոռաց, էկավ կայնավ էդ մարթի գլխին: Ֆիճակ էր, կանաս ասես: Բերին Սալուն դրին թաքավոր:

Սալին, որ դարձավ թաքավոր, մարթ հղրկեց, ասավ. — Գացե՛ք քաղաքի կրաղին էրկու հայդնի վաճառականներ են աբրըմ, ասեք, թաքավորը ձեզի վռազ կանչըմ ա:

Գացին վաճառականներին ասին՝ նորընտրյալ թաքավորը ձեզի կանչըմ ա:

Վաճառականները էկան ներկայացան թաքավորին:

Թաքավորն հարցրեց, ասավ.—Ի՞նչ եք անըմ դուք էս քաղաքի մեջը:

Ըստանք վերցին՝ թե.—Թաքավորն աբրած կենա, մենք էս քաղաքի ամենահայդնի վաճառականներն ենք:

Թաքավորն փորձելու համար ասավ.—Եթե ձեր թաքավորն ու երգիրը նեղության մեջ հրլնեն, ինչո՞վ կանաք օգնի ձեր թաքավորին:

Մեկն ասավ.—Եռեսունհինգ տարի ամբողջ ժողովրթի ու զորքի հաց ու շորը կըտամ:

Թաքավորն ասավ.—Այ մարթ, քեզ էղքան հարստություն ո՞րդեղից:

—Ո՞նց թե որդեղից, թաքավորն աբրած կենա, մենք պապեապապ վաճառական, հարուստ մարթիկ ենք, միջիոնների հարստություն ունենք:

Թաքավորն դարձավ էն մեկէլին, ասավ.—Դու իշքա՞ն կանաս օգնի քո թաքավորին:

Սա վերցեց, թե.—Թաքավորն աբրած կենա, ես էլ 40 տարի կանամ հաց և շոր տամ քո ժողովրթին:

Թաքավորը ըստան էլ հարցրեց.—Բա քե որդեղից էղքան հարստություն:

—Թաքավորն աբրած կենա, ես որ կամ քոք ու բսով իշխան, աղա մարթ եմ հելե, էս վերջի տարիներն ա, որ առըտուր եմ անըմ:

Թաքավորն հրամայեց, ասավ.—Վաքի՛լ, վազի՛ր, էկե՛ք ստե:

Հավաքվան էկան:

Թաքավորն ասավ.—Տենըմ եք էս մարթկանց:

Պալատականներն ասին.—Տենըմ ենք, թաքավոր:

—Դե ինչ որ ես ըստանցը կասեմ, լա՞վ անզաջ կանեք:

—Վաճառականնե՛ր, —ասեց թաքավորը, —ես լսել եմ, որ դուք Սալի անունով հընգեր եք ունեցե, ճի՞շտ ա:

Վաճառականները՝ թե.—Զէ՛, թաքավոր, ճիշտ չի, մենք Սալի անունով հընգեր չենք ունեցե:

—Լսըմ ե՞ք, պալատականնե՛ր:

—Լսում ենք, թաքավոր:

Թաքավորն ասավ.—Հըլա մի լավ մտածեք: Էն Սալին չէ՞ր, որ բազարի մեջ հանդիբավ ձեզի, ասավ՝ ինչ մարթիկ եք, դուք ասիք՝ անտեր-անտիրական մարթ ենք: Սալին ձեզի չըտարա՞վ հիրանց տունը, մե հատ էլ պառավ մեր ուներ, էն հեքսի օրն էլ հիրար հետ

չըգացի՞ք մեշից ցախ իք բերըմ ծախըմ: Սալին չէ՞ր, որ ասավ՝  
տղե՞ք, ըսենց չի հըլնի, բերեք մարթա մե էշ առնենք, մեշքներս յա-  
րա հելավ, գացիք մարթ ա մե էշ առաք, ցախը էշերվիք կրըմ: Մե  
օր էլ չըգնացի՞ք մեշի խոր տեղը, որ Սալու էշը կորավ, դուք բեռ-  
ներդ դզիք, ասիք՝ Սալի՛, մենք հառեշ-հառեշ էթըմ ենք, դու կըգաս  
կըհասնես: Սալին գնաց էշին քթավ, ցախը բարցած հետ էր զալըմ,  
մե ծառի տակով հընցնելու վախտը էշի ոտերը հընդան փոսի մեջ,  
Սալին ասավ՝ ըստե մե բան կա, սալը շուռ տվեց, տեհավ՝ փոսի  
մեջը լիքը մեղր ա: Սալը դրեց փոսի բերանը, ուրախ-ուրախ էկավ  
հասավ ձեզի: Յախերը ծախեցիք, գացիք պառավի տունը: Սալին  
ձեզի չասե՞ց՝ էլ ըստուց դեն ցախ չենք կրի, դուք էլ, որ զարմա-  
ցաք, ասիք՝ ընչի՞:

Սալին ձեզի չասա՞վ, թե՝ մե հարուստ մարթ քթնենք, որ մեղ-  
րը ծախենք: Էն հեքսն էլ, որ հարուստից ամաններն առաք գացիք,  
Սալին խորը քթավ, բերնի սալը շուռ տվիք ու սկսիք մեղրը կրել:

Քսանհինգ օր չըկրի՞ք մեղրը, որ վերջի օրն էլ Սալու էշի բե-  
ռը կիաստ մնաց, Սալուն հիշրիք խորը, որ մեղր հաներ: Սալին  
չիջա՞վ փոսը, որ մեղր հաներ, որ դուք էլ ընդան խորից հանելու  
վախտը ճոպանը կղրիք, թողիք փոսի մեջը, էշն էլ բերեցիք, ծա-  
խիք. մե կապեկ փող էլ չըտվիք ընդա մորը:

Նոր էլ որդե:

Թաքավորը թագը գլխից հանեց, ասավ.—Հը, ես ձեր հընդեր  
Սալին չե՞մ:

Վաճառականների հերեսի գույնը թռավ:

—Զանաթնե՞ր:

Զանաթներն էկան՝ համե՛, թաքավո՞ր:

—Թոցրե՞ք սրանց վիզը:

Վաճառականներին քյալա անելուց հետո թաքավորը ընդանց  
ունեցած-չունեցածը բաժանեց աղքատներին, քյասիք-քյուսուրին:

Երկնքից իրեք հատ խնձոր հընդան պաղմողին, մեկը՝  
չարչրվողին, մեկն էլ՝ բերան ցավցնողին: